

ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ

ՄԵՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ

«ԲԱԶՄԱՎԵՊ».— Հանդիսարան բանասիրական, գրական, գիտական, բարոյական.— Մեր ամենէն հին, վաստակաւոր պարբերականը: Հրատարակուիմ է 1843 թ. սկսած, ասել է, գրեթէ հարիւր տարւայ կեանք ունի: Տեսել է լաւ եւ վատ օրեր, մտքի տխրամեք է հիւրընկալել իր էջերում եւ անգնահատելի ծառայութիւն մատուցել հայ մշակոյթին:

Իր եղբայրակից «Հանդէս Ամսօրեայ»-ից «Բազմավեպ»-ը տարբերուիմ է նրանով, որ իր էջերը բաց են նաեւ առօրեայ կեանքի երեւոյթների համար: Եւ, ի հարկէ, սա նրա խոցելի կողմն է: Վաճճը ունի իր պայմաններն ու մտահոգութիւնները, որոնք յաճախ ներհակ են աշխարհիկ կեանքին: Այդ պատճառով, ամէն անգամ, երբ վաճաճները փորձել են գրադել նաեւ աշխարհիկ կեանքի ընթացիկ խնդիրներով, անխուսափելիօրէն վրիպել են: Օրինակ էջմիածնի «Արարատ»-ը, որ գիտական տեսակէտից իր ամենափայլուն շրջաններին՝ անյաջողութեան է մատուել հէնց որ ուզեցել է աշխարհիկ հրապարակագրութիւն անել: Օրինակ, Երուսաղէմի «Սիրոն»-ի կամ Անթիլիասի «Հասկ»-ի այսօրուայ վիճակը: Եւ կամ, վերջապէս, բողոքական «Հայաստանի կոչման»-ի պարզած տխուր պատկերը: Կացութիւնը պարտաւորեցնում է. անկախ իր կեանքից վեղարի տակ զբոսնելու ամօր պարտաւոր է մտածել այնպէս, ինչպէս ստիպում են կրօնական դաւանման, եկեղեցական միաբանական կարգը կամ վաճաճ կանոնները,

որոնք շատ անգամ չեն ներդաշնակում ընդհանուր կեանքի պահանջներին:

Հայ մշակոյթի տեսակէտից, «Բազմավեպ»-ի մէջ արժեքաւոր է, անշուշտ, գիտական-բանասիրական մասը: Մենք պիտի սիրէինք միջիւրբան բազմահմուտ միաբանների այժմ կիրարկւած տեսնել հէնց այս սալարէզում: Հայոց պատմութեան ու բանասիրութեան, հայ գիտութեան համար նրանց կատարած գործը անփոխարինելի է. օրուայ լրագրութիւնը նրանց միայն վնաս կարող է հասցնել:

«Վեմ»-ի հետաքրքրութեան ակնոցով մօտենալով «Բազմավեպ»-ի ընթացիկ տարւայ առաջին չորս համարներին, դժբախտաբար, դրական շատ բան չունինք արձանագրելիք: Ամենէն ուշագրբաւ, գոնէ ամենէն ընդարձակ նիւքը Ա. Երեմեանի «Ռուսահայ քաղաքի պատմութիւնը» ուսումնասիրութիւնն է՝ սկսւած Նոյեմբեր-Դեկտեմբեր միացեալ համարից եւ դեռ շարունակելի է: Ինչպէս յայտնի է, այս տարի լրացաւ Ռուսահայ քաղաքին 75 ամեակը: Երեմեանի աշխատութիւնը պատեն առիքով է լոյս տեսնում: Յօդածի մասին ըստ էութեան կարծիք յայտնելու համար կը սպասենք նրա վերջաւորութեան: Պիտի կարողանա՞նք Երեմեանը տալ գիտականօրէն հիմնաւորւած լուրջ գործ — մինչեւ այժմ լոյս տեսած մասերը մեծ յոյս չեն ներշնչում այդ տեսակէտից:

Այս կապակցութեամբ, կանգ առնենք եւ Հ. Ե. Փէչիկեանի «Հայկական քաղաքների ծագումը» յօդածի վրա (№ 1).

գրած իրագեղի «Վեմ»-ի Բ. քում լոյս տեսած «Հայ անդրանիկ քատերգութիւնը» ուսումնասիրութեան առարիւ: Իրագեղը փորձել էր հերքել հայ գրականութեան պատմութեան մէջ ընդունած կարծիքը, թէ «Հ. Պետրոս Միմասեանն է հայ անդրանիկ քատերգիրը եւ ուրեմն Մխիթարեան հայերինն է պատկանում առաջնութեան պատիւը հայ քատերգութեան ասպարէզում», եւ հաստատել, որ առաջնութեան պատիւը կամ առաջին խօսքը պատկանում է հնդկահայերին»: Հ. Փեչիկեանը Հ. Բարսեղ Սարգիսեանի «Երկհարաւմեայ Գրական Գործունէութիւն եւ Նշանաւոր Գործիչներ Վեներաբոյ Մխիթարեան Միաբանութեան» (տպ. 1905) գրքից՝ քաղած՝ տեսակներով՝ աշխատում է ջրել իրագեղի փաստերը եւ ցոյց տալ, որ մխիթարեաններն են հայ քատերգի եւ քատերգութեան հիմնադիրները:

Այս գուտ գրական-գիտական խնդիրը Հ. Փեչիկեանը ներկայացնում է արտասովոր յուզումով՝ ջանալով պաշտպանել Մխիթարեան միաբանութիւնը, իբր թէ, հասցւած անիրաւութիւնից: Այն ինչ յուզելու եւ նեղանալու բնաւ առիթ-չկայ: Իրագեղը, բնականաբար, մխիթարեաններին վերադնելու նպատակ չի ունեցել, ոչ էլ նսեմացնել ներանց մեծ դերը, այլ կամեցել է ուղղել պատմական մի սխալ: Եւ ուղղել է՝ փաստի հիման վրա ցոյց տալով, որ Լեւոն, Վ. Փափագեանը եւ ուրիշներ սըխալուում են Հ. Պ. Միմասեանի «Խոսքով Մեծն» ողբերգութիւնը (1845 թ.) համարելով անդրանիկ, կամ 19րդ դարի անդրանիկ հայ քատերգութիւնը: Նա երբայբարեւ է համել մի անյայտ քատերգութիւն, որ տպւել է Կալկաթայում 1821 թ. եւ դրանից առաջ խաղացել հնդկահայոց բեմի վրա: Հ. Փեչիկեանը պէտք է միայն շնորհաւորէր իրագեղի գործը եւ ապա կատարէր իր անբաժնշտ տեսած նշումներն ու լրացում-

ները:*) Հնդկահայոց խաղացած կարեւոր դերի մատնանշումը մխիթարեանների դերի ուրացում կամ նսեմացում չէ բընաւ: Հ. Իմնիհեանի լրագրութիւնը (1799-1820) որքան եւ նշանակալից՝ ամենեւին չի կարող մթագնել արժէքը այս փաստի, որ հայ լրագրութիւնը ծնունդ առաւ Հնդկաստանում (1794): Հնդկահայոց գործը հայ մշակոյթի եւ քաղաքական մտքի զարգացման տեսակետից եղել է ոչ «գարմանալի», ոչ էլ «ծիծաղելի», այլ, ճիշտ է նկատում իրագեղը, նշանակալից: Եւ այդ փաստի մատնանշումից ոչ ոք չպէտք է վըշտանայ:

Մենք չենք ուզում ըստ էութեան խառնել վեցին իրագեղի եւ Հ. Փեչիկեանի միջեւ. նրանք իրենք էլ, երէկաքի գգան, ի վիճակի են հիմնաւորելու եւ պաշտպանելու իրենց տեսակետները: Մենք ուզում ենք միայն, որ գուտ գրական-գիտական խնդիրներում «իմ»-ի ու «ոմ»-յի, անձնական կամ խմբական արժանապատւութեան հարցեր չյարուցին: Միակ հարցը՝ պատմական նշանաւորութիւնն է:

Երկու խօսք էլ իրագեղին: Թեհրանի «Ալիք» քերթում (№ 51, 52) նա «Մի ցաւալի քիւրիւմացութիւն» վերնագրով

*) Հետաքրքրական է, որ «Բաղմավէպ»-ի № 1-ում Հ. Փեչիկեանը դատապարտում է իրագեղին, որ օտ կարծիք է յայտնել, թէ Հայերն ամենահին թատերգութիւնը «Պարադիմայ Դժողութեան»-ն է, իսկ մի ամիս յետոյ, նոյն «Բաղմավէպ»-ի № 2-3-ում Ա. Երեմեանը դրում է, թէ՛ «Պարադիմայ Դժողութեան» կատակերգութիւնը ժամանակագրական տեսակէտից մինչեւ օրս յայտնադործւած պիէսներից ամենահինն է, եւ թէ որոշ «վերապահութեամբ կարելի է ընդունել, որ առաջին Հայ թատերգութիւնը «Պարադիմայ Դժողութեան» կատակերգութիւնն է» (էջ 84):

ընդարձակ բացատրութիւն—պատասխան է գրել Ն. Փէշիկեանի յօդածի առթիւ եւ, ի միջի այլոց, մեղադրում է մեզ, որ մեր «Խմբագրի սուր մկրատը» «գիլեոտիքն» է եմբարկել իր գրածքը եւ որ եթէ մենք իր յօդածի առաջին մասը յապաւած չլինէինք, Ն. Փէշիկեանը առիթ չէր ունենայ գրելու եւ ինքն էլ ազատ կը մնար «անտեղի գլխացաւանֆից»:

Ճիշտ է, մենք իրազեկի գրութեան առաջին մասը յապաւեցինք, բայց եթէ ամբողջն էլ տպած լինէինք, ըստ էութեան ոչինչ չէր փոխի, որովհետեւ Ն. Փէշիկեանի առարկութիւնը աւելի հիմնական է. նա գտնում է, որ ոչ միայն 19-րդ դարում, այլ, առհասարակ, հայ բատրոնի եւ բատրգութեան սկիզբը դրել է մխիթարեանների կողմից: «Խտրադիմա»-ն յօրինելու խաղացել է 19-րդ դարի առաջին քառորդում, մինչ Ն. Փէշիկեանը Ս. Ղազարի վանքի անտիպ ժամանակագրութիւնից առնելով՝ գրում է, թէ 1760 թ. եւ դրանից առաջ Վենետիկում խաղացել են հայերէն բատրգութիւններ: 1807 թ. սկսել են յօրինել ու քննադրել աշխարհաբար կատակերգութիւններ: Ն. Փէշիկեանը նոյն իսկ յիշում է մի շարք անուններ: Գուրս է գալիս, ուրեմն, որ, «Խտրադիմա»-ն 19-րդ դարում էլ անդրանիկը չէ: Գուցէ անդրանիկն է իբրեւ տպազըրւած գործ: Իրազեկի յօդածի յապաւած մասը այս խնդիրը չի շոշափում: Այնտեղ համառօտ ակնարկ է նետած հայ էին շրջանի բատրոնի գարգացման ամենաինքն ծանօթ փաստերի վերա, որոնք, մեր կարծիքով, շատ են տարրական այս կարգի ուսումնասիրութեան մէջ տեղ գրաւելու համար:

Այս հարցը մեզ շատ զբաղեցրեց, եւ «Բազմավէպ»-ի բովանդակութեան միւս մասերին անդրադառնալու տեղ չմնաց, դժբախտաբար:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈԶՆԱԿ».- «Ազգային, ֆալաֆական եւ տնտեսական» այս շա-

բաբաբերքը 34 տարի է (առաջ միայն «Կոչնակ» անունով) իրատարակում է Նիւ Եորքում, մի քանի բաղադական հարուստ ազգայինների նւթական աջակցութեամբ եւ Ամերիկայի հայ պատւելիների բարոյական հակակշռի տակ: Առաջ «Հ. Կոչնակ»-ը բաւական լայն տեղ էր տալիս գիտական-բանասիրական եւ պատմական նւթերին: Նրան, առանց կուսակցական խտրութեան, աշխատակցում էին մեր աչքի ընկնող մշտաւորական ուժերը: «Հ. Կոչնակ»-ի էջերում կարելի էր հանդիպել Մինաս Չերազի, դր. Յ. Թիրաֆեանի, Ա. Ալպոյանեանի, Մ. Վարանդեանի, Բժ. Վ. Թորգոմեանի, Բաբկէն Նպ.-ի պէս անունների: Հետգիտէ, սակայն, նա ըսկըսեց մխրեւել օրւայ կեանքի - ազգային-կուսակցական խնդիրների մէջ եւ կորցրեց գիտական նշանակութիւնը: Այսօր արդէն, «Հ. Կոչնակ»-ը քայփայական պայփարի գործիք է՝ նեղմիտ ու կրքոտ՝ եւ ծառայում է որոշ տարրերի շահերին: Նրա մշակութային մակարդակը իջել է ամենացածր աստիճանի, որ, ի հարկէ, շատ ցաւալի է: Գուցէ այդ վիճակից որոշ խմբակներ կամ անձեր անմիջական շահ ունեն, բայց հայ մշակոյթի համար ոչ մի օգուտ չկայ դրանից:

«ՀԱՅ ՍԿԱՆԻՏ», «ՀԱՅ ԱՐԻ».- Երկու ամսագիր՝ միեւնոյն ծաւալով, միեւնոյն արտաքինով եւ միեւնոյն նպատակին ծառայող - հայ արիւնների երկու հատածներին ն ի ի ւ ած: Առաջինը՝ պաշտօնագրերը է Ն. Մ. Բ. Մ.-ի. երկրորդը՝ Հայ Արիւնների: Առաջինը խմբազըրւում է աւելի լաւ հայերէնով եւ աւելի մօտ է հայ կեանքին, երկրորդը՝ աւելի լայն տեղ է տալիս միջազգային խնդիրներին եւ հայերէնի գործածութեան մէջ տկար է: Երկուսն էլ ջերմօրէն նւիրւած են նոր սերնդի հոգեկան եւ մարմնաւոր զարգացման եւ անսահման սէր են ցոյց տալիս դէպի իրենց գործը:

Բայց եւ այնպէս մարդ դառն զգա-

ցումով է կարդում այս երկու հրատարակությունները: Նրանք հայելին են այն զարկուրելի կացութեան, որի մէջ գալարում է պառակտւած ու քշմամի հատւածների վերածւած գաղութահայութիւնը: Պէտք էր յուսալ, որ մեր նոր սերունդը, անող ու դաստիարակւող աւելի փաղափակիրը պայմաններում, ազատ կը լինէր մեծերի ակտիւ - քայփայտութիւնից: Պէտք էր ըստպասել, որ գէր արիական շարժման պէս մի համադրող երեւոյթ գոյող - միացնող ազդակ լինէր մեր երիտասարդութեան համար - իրականութիւնը, դժբախտաբար, ճիշտ հակառակն է հաստատում. միութիւն չկայ եւ այստեղ: Մեր զաւակները կրկնում են հայերի սխալը՝ առանց գիտակցելու, թէ ի՞նչ ծանր յանցանք է իրենց կատարածը:

Ո՛չ մի լուրջ հիմք չկայ անհամբաշխութեան: «Հայ Սկսուտ», «Հայ Արի» - աններելի ամօք է այս պառակտումը: Անհրաժեշտ է օր առօր միացընել հայ արիների բոլոր կազմակերպութիւնները մէկ դրօշակի տակ եւ ունենալ մէկ պաշտօնաբերք: Առանձին - առանձին երկուսն էլ կը լինեն բոյլ, միութիւնը կը տայ ոյժ եւ յաջողութիւն:

Hairenik Weekly. - «Հայրենիք» շաբաթաբերքը անգլիներէն լեզուով, որ անսմի քանի ամիս է լոյս է տեսնում Բոստոնում, նոյնանուն օրաթերքի եւ ամսագրի կողքին: Այսօր կարճ ժամանակամիջոցում թերթը արդէն մօտ 2500

օրինակ սպառում ունի եւ տարածւած է ոչ միայն Ամերիկայում, այլեւ անգլիախօս ուրիշ երկրներում՝ Հնդկաստան, Իրաք, Պաղեստին, Կիպրոս, Եգիպտոս եւայլն: Յաջողութիւնը ակնհայտ է: Եւ առաջին 14 թիւերը վկայում են, որ այդ յաջողութիւնը անսեղի չէ:

Hairenik Weekly. - հրատարակւում է «Հայրենիք»-ների ընդհանուր խմբագրութեան ղեկավարութեան տակ եւ ամմիջական խմբագրութեամբ երիտասարդ լրագրող Արմէն Պարտեզեանի: Պէտք է ուրախութեամբ արձանագրել, որ գործը տարւում է ըստ ամենայնի գոհացուցիչ կերպով: Թէ ոգին եւ ուղղութիւնը, թէ նիւթերի ընտրութեան ճաշակն ու բազմազանութիւնը, թէ, վերջապէս, բազմաթիւ երիտասարդ ուժերի աշխատակցութիւնը բերքը դարձնում են հետաքրքրական եւ անպայման օգտակար: Ուշադիր ընթերցողը կը նկատէ, թէ ի՞նչ կենդանութիւն է առաջ եկել ամերիկահայ անգլիախօս սերնդի մէջ, ինչպիսի՜ ջերմ համակերանք է ստեղծւել այս նոր շաբաթաթերքի շուրջ, որ առատ եւ քարմնիւր է տալիս հայ կեանքի բոլոր երեւոյթների մասին: Այսօր յաջողութիւնը պացոյց է, որ նա ընդ առաջ է գալիս վաղուց հասունացած պահանջի, մի պահանջ, որ, աւա՛ղ, բխում է մեր կեանքի դժբախտ հանգամանքներից: Մի փառքի տարի եւս - եւ այդ պահանջը պիտի գզացի նաեւ Ֆրանսայում, ուր արդէն նոյնպէս հասնում է օտարախօս մի հայութիւն:

